ԳԼՈՒԽ Թ.

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ*)

Շարուր—Նախիջևանի դէպքերին զուգընթաց Ադրբէջանը գործօն քայլերի դիմեց և ղարաբաղցիներին ընկճելու համար։

Ղարաբաղը բռնում է Հայաստանի հիւսիս-արևելեան մասը և իր աշխարհագրական ու բնական պայմաններով, իր ազգագրական կազմով հանդիսանում է Հայկական Բարձրաւանդակի անմիջական շարունակութիւնը։ Ցարական իշխանութեան օրով նա միացած էր թրքական հարթավայրերի հետ և մտնում էր Գանձակի նահանգի մէջ, որի գաւառները ձևւած էին այնպէս, որ ամէն տեղ հայերը կազմում էին փոքրամասնութիւն։ Մինչդեռ Լեռնային Ղարաբաղը, այսինքն՝ Շուշիի, Ջիւանշիրի և Ջիբրայիլի լեռնային մասերը — Խաչէն, Վարանդա, Դիզակ, Ջրաբերդ — կազմում են մի ամբողջութիւն՝ հայ հոծ ազգաբնակութեամբ։

Ղարաբաղի ազգային կազմի մասին Դ. Անանունը հետևեալ տեղեկութիւններն էր տալիս «Հայաստանի Կոօպերացիա»-յի 1920թ. սեպտեմբերի համարում.

«Ղարաբաղի լեռնաստանում 1917թ. տեսչներով ապրում էին՝ հայեր՝ 150,000 (70%), մուսուլմաններ՝ 58,000 (27%), մնացած ազգեր՝ 5000 (3%)։ Այժմ ազգութիւնների թուական յարաբերութիւնը միանգամայն փոխուած է։ Ուրիշ ազգերից ռուսները հեռացել են Ռուսաստան։ Ապա Լեռնային Ղարաբաղի որոշ գիւղերից հեռացել են նաև թուրքերը։ Դրա դիմաց լեռներն են ապաստանել տափաստանում եղած հայ գիւղերի բնակիչները (Ջիվանշիր գաւ.)։ Այսպիսով, Հայկական Ղարաբաղում (Ջրաբերդ, Խաչէն, Վարանդա, Դիզակ) հայ տարրը աւելի է ամրացել թուով։ Իսկ եթէ սրան աւելացնենք նաև, որ հին Ղարաբաղի անբաժան մասը կազմող Գիւլիստանը վերջին տարիների անց ու դարձի մէջ վերականգնեց իր կապը նախկին միաւորի հետ և ընթացաւ հայկական քաղաքականութեան հունով, պատկերն աւելի կատարեալ կը լինի»։

Ռուսական յեղափոխութիւնը Ղարաբաղում ևս ընդունեց խանդավառութեամբ։ Յեղափոխութեան առաջին օրերից Շուշիում կազմուեց հայ—թրքական միջկուսակցական մի բիւրո, որի կողմից նշանակուեց շրջանային գործադիր կոմիտէ, որը պէտք է վարէր Ղարաբաղ—Զանգեզուր միացեալ

---

*) Այս գլխի համար, բացի տպած նիւթերից, օգտուել եմ նաև Ղարաբաղ-Զանգեզուրի գործիչների, 1922թ. յուլիսին, Թաւրիզում, կազմած զեկուցումից և Հ. Հ. Պատւիրակութեան ու Հ. Հ. Թիֆլիսի դիւ. ներկայացուցչութեան «Գործ»-երից։